Ընդունելության թեստի նմուշօրինակ

2018-2019 ուստարի

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ (VII դասարան)

ՄԱՍ I. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ (1-15)

Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանների 4-ական տարբերակ, որոնցից ճիշտ է միայն մեկը:

1. Ո՞ր թիվը պետք է գումարել՝ $9\frac{2}{5}$-ին, որպեսզի ստացվի –5,

1) $\frac{1}{35}$ 2) $\frac{5}{37}$ 3) $\frac{2}{35}$ 4) $-14\frac{2}{5}$

2. Գտեք ամենափոքր հնգանիշ թվի և ամենամեծ եռանիշ թվի տարբերությունը:

1) 1098 2) 1001 3) 901 4) 9001

3. m-ի ի՞նչ արժեքի դեպքում է $(9-2m)$ արտահայտության արժեքը 10-ով փոքր է $(9m-3)$ արտահայտության արժեքից:

1) $\frac{2}{11}$ 2) 2 3) -2 4) $\frac{93}{29}$

4. Ինչքանո՞վ է 27 մ 38 սմ-ը մեծ 1381 սմ-ից:

1) 13 մ 50 սմ 2) 13 մ 57 սմ 3) 12 մ 50 սմ 4) 10 մ 50 սմ

5. 5 գ 7 կգ մեկ տոննայի ո՞ր մասն է կազմում:

1) $\frac{57}{100}$ 2) $\frac{570}{1000}$ 3) $\frac{57}{1000}$ 4) $\frac{507}{1000}$

6. Ո՞ր թվանշանով է վերջանում 5-ի բաժանվող զույգ թիվը:

1) 6 2) 0 3) 5 4) 2

7. Գտեք իրար հաջորդող այն երկու բնական թվերը, որոնց գումարը հավասար է 43-ի:

1) 20; 21 2) 21; 22 3) 25; 26 4) 22; 23

8. Գտեք 20-ից փոքր բոլոր զույգ թվերի գումարը:

1) 90 2) 45 3)80 4) 100

9.

Քանի՞ տոկոսով կփոքրանա քառակուսու մակերեսը, եթե նրա կողմը փոքրացնենք 20 %-ով:

1) 10 2) 20 3) 36 4) 40

10.

Ունենք 72 կգ պղնձի և 8 կգ արծաթի համաձուլվածք: Քանի՞ տոկոս է արծաթը այդ համաձուլվածքում:

1) 80 2) 20 3) 90 4) 10

(11-12) Գտնել արտահայտության արժեքը.

11.

$$\frac{\left(25\frac{1}{3}+4\frac{8}{9}\right):\frac{5}{6}}{\left(7+3\frac{1}{6}\right)\cdot 9\frac{3}{5}},$$

1) 1 2) $\frac{68}{183}$ 3) $\frac{57}{100}$ 4) $\frac{20}{3}$

12. $|b|-|a|$, եթե $a=-1\frac{1}{2}$, $b=\frac{1}{2}$

1) 2 2) 0 3) 0,5 4) -1

(13-15) Հավասարումներ և անհավասարումներ:

13. $3\cdot(x+4)=18,$

1) 2 2) 3 3)1 4) -1

14. $-4\frac{1}{5}x+\frac{1}{5}=\frac{17}{25}-x$

1) $\frac{13}{20}$ 2) $-\frac{3}{20}$ 3) $\frac{2}{35}$ 4) $\frac{2}{5}$

15. Ո±ր բնական թվերն են $3 < x \leq 7$ անհավասարման լուծումները:

1) 3;4;5;6; 2) 4;5;6; 3) 3;4;5;6;7 4) 4;5;6;7

ՄԱՍ II. Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ (16-20)

(16-20) *Առաջադրանքների կատարման համար յուրաքանչյուր առաջադրանքներից հետո պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ամբողջ ընթացքը՝ նշված տեղում:*

16.

Եռանկյան պարագիծը 84 սմ է: Գտեք նրա կողմերի երկարությունները, եթե նրանք համեմատական են 7, 9, 12 թվերին:

17. Նավակը գետի հոսանքին հակառակ ուղղությամբ 30 կմ ճանապարհը՝ 2 ժամում, իսկ հոսանքի ուղղությամբ 100 կմ ճանապարհն անցնում է 4 ժամում: 30 կմ ճանապարհը լաստը քանի՞ ժամում կարող է անցնել:

18.

Մի բանվորը, աշխատելով մենակ, կարող է ավարտել տրված աշխատանքը 9 օրում, իսկ մյուսը՝ 12 օրում: Միասին աշխատելով՝ աշխատանքի որ մասը կկատարեն բանվորները 1 օրում:

(19-20) Նույն արտադրողականությամբ աշխատող 2 օպերատոր 2 օրում մուտքագրում են 80 էջ:

19. Քանի՞ էջ է մուտքագրում 6 օպերատորը 6 օրում:

20. Քանի՞ օպերատորը կարող է 400 էջը մուտքագրել 4 օրում: